ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 8. Քննչական կոմիտեի գործունեության հրապարակայնությունը

1. Քննչական կոմիտեն հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին՝ ապահովելով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև պետական **~~և ծառայողական~~** կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությունը:

2. Քննչական կոմիտեն յուրաքանչյուր տարի հրապարակում է տեղեկատվություն իր գործունեության մասին:

3. Քննչական կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, Կառավարություն է ներկայացնում գրավոր հաղորդում՝ քննչական կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին:

(8-րդ հոդվածը փոփ., լրաց. 23.03.18 ՀՕ-311-Ն, փոփ. 09.12.20 ՀՕ-494-Ն)

Հոդված 27. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պարտականությունները

(վերնագիրը փոփ. 09.12.20 ՀՕ-494-Ն)

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է՝

1) տիրապետել զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին.

2) կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ.

4) իր գործունեության ժամանակ պահպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու օրինական շահերը.

5) պահպանել ծառայողական կարգապահությունը.

6) պահպանել պետական~~, ծառայողական~~ կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու համար սահմանված պահանջները, այդ թվում՝ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո.

7) քննչական կոմիտեի նախագահի սահմանած կարգով իրականացնել հերթապահություն:

2. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն ունի օրենքով սահմանված այլ պարտականություններ:

(27-րդ հոդվածը լրաց. 17.01.18 ՀՕ-79-Ն, փոփ. 09.12.20 ՀՕ-494-Ն)